ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Աբովյան **12/02/2025**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8/2
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 24 անդամ:

Բացակա էին՝ Դավիթ Զարոյանը (աշխատանքային օրվա ընթացքում վատառողջ լինելու պատճառով ստացել էր բացակայելու թույլտվություն), Ալեքսանդր Խաչատուրյանը, Կարեն Սերոբյանը

<u>Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝</u> Արամ Վիրաբյանը, Արմեն Շմավոնյանը

<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Էդուարդ Բաբայանը</u>

<u>Նիստն արձանագրում էր Աշխատակազմի քարտուղար՝ Վանիկ Բաբաջանյանը</u>

Նախքան օրակարգային հարցերի ներկայացումը, աշխատակազմի քարտուղար Վ. Բաբաջանյանը Ավագանու անդամների ուշադրությունը հրավիրեց երկու հարցի վրա.
1. Հիմք ընդունելով Աբովյան համայնքի ավագանու (այսուհետ՝ ավագանի) 2021 թվականի դեկտեմբերի 29-ի N 4-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 115-րդ կետը (նոր խմբագրությամբ շարադրված ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 12-ի N 123-Ա որոշմամբ)՝ կատարվել է Ավագանու 2024 թվականի 7-րդ նստաշրջանի ընթացքում նիստերից կամ քվեարկությունից կամ մշտական հանձնաժողովների նիստերից Ավագանու անդամների բացակայության տվյալների հաշվարկ: Ըստ այդմ, Ավագանու «Հանրապետություն» խմբակցության անդամ Կարեն Սերոբյանը բացակայել է 7-րդ նստաշրջանի բոլոր նիստերից և քվեարկություններից (4 նիստ, 112 քվեարկություն):
«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, Կարեն Սերոբյանի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել, որի վերաբերյալ համապատասխան նախագիծը կներկայացվի Ավագանու հաջորդ նիստին,

2. 23.01.2025թ. նիստում Ավագանին լիազորեց Ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության անդամ Վահե Հարությունյանին՝ համայնքային շահերի

պաշտպանության նպատակով իրավասու դատարան հայց ներկայացնելու համար (որոշում N 08-Ա): Իր լիազորությունների շրջանակներում պարոն Հարությունյանը նախապատրաստել է համապատասխան գրություն, որը ս.թ. հունվարի 31-ին Ե-619 գրությամբ ուղարկվել է ՀՀ գլխավոր դատախազության համապատասխան պաշտոնյային՝ խնդրելով ներկայացնել դիրքորոշում՝ հայց ներկայացնելու ժամկետները վերանայելու և ողջամիտ ժամկետներ սահմանելու մասին: Հարկ է նշել, որ առ այսօր նշված գրությանը որևէ պատասխան չի ստացվել:

ԼՍԵՑԻՆ

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ)

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Հաստատել Աբովյան համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 12-ի ութերորդ նստաշրջանի հերթական երկրորդ նիստի հետևյալ օրակարգը.

1) Աբովյան համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին.

2) Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի N 57-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

3) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Հանրապետության պողոտայի թիվ 22/17 հասցեում գտնվող խանութի պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին.

4) Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 228-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին.

5) Աբովյան համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը ձայների մեծամասնությամբ տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 09-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ)

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետի և 82.1-րդ հոդվածի, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Հաստատել Աբովյան համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը

(կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը ձայների մեծամասնությամբ տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 10-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 13-Ի N 57-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ)

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝ Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի «Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման համար մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին» N 57 Ա որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.
«1. Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի (հողամասերի, այլ անշարժ և շարժական գույքի) վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման համար ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով՝
1) Գևորգ Հակոբյան - Աբովյան համայնքի ղեկավարի տեղակալ - հանձնաժողովի անդամ, աճուրդավար,
2) Արմեն Քոսակյան - ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ,
3) Ռազմիկ Արզումանյան - ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ,
4) Մերուժան Մելիքսեթյան - համայնքի ղեկավարի օգնական, հանձնաժողովի անդամ,
5) Արսեն Հարությունյան - համայնքի ղեկավարի խորհրդական, հանձնաժողովի անդամ,
6) Արմեն Շմավոնյան - Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի ծրագրերի, գյուղատնտեսության և անշարժ գույքի կառավարման բաժնի պետ, հանձնաժողովի անդամ,
7) Նունե Բալիշյան - Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինարարության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ,
8) Տաթևիկ Սարոյան - Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի ծրագրերի, գյուղատնտեսության և անշարժ գույքի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ,
9) Ելենա Բարսեղյան - Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի, սպասարկման, տրանսպորտի և գովազդի բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ՝ արձանագրող:»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Զեկուցողը հայտնեց, որ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունն առաջարկել է հանձնաժողովի կազմում ընդգրկել ավագանու անդամՎաչագան Գրիգորյանին:
Նախագիծը դրվեց քվեարկության առաջարկված տարբերակով:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 11-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՈՂՈՏԱՅԻ ԹԻՎ 22/17 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԽԱՆՈՒԹԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԱՄ ՎԻՐԱԲՅԱՆ)

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշման, հաշվի առնելով այն հանգամանքը, որ խանութի զբաղեցրած համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 9-ի N 1036-Ն որոշմամբ հաստատված Աբովյանի քաղաքային համայնքի գլխավոր հատակագծով ներառված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում և հիմք ընդունելով Լավուրիկ Եղիազարյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի դեկտեմբերի 02-ի N Ք-8638), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է***.
1. Լավուրիկ Հայկազի Եղիազարյանին պատկանող (հիմք՝ 2018 թվականի հունիսի 15-ի սեփականության իրավունքի և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր՝ գրանցված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի նոտարական տարածքի նոտարի գրանցամատյանում՝ N 2975, N 2976) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Հանրապետության պողոտայի թիվ 22/17 հասցեում գտնվող խանութի պահպանման ու սպասարկման համար առանձնացված 13.2 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը (ծածկագիր՝ 07-002-0082-0322-ից) գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով, հողի կադաստրային արժեքով օտարել Լավուրիկ Հայկազի Եղիազարյանին:
2. Լավուրիկ Եղիազարյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին վճարել 213 532 (երկու հարյուր տասներեք հազար հինգ հարյուր երեսուներկու) դրամ՝ հողամասի գինը:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 60-օրյա ժամկետում որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպում չկատարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լավուրիկ Եղիազարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 12-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 228-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԱՄ ՎԻՐԱԲՅԱՆ)

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի «Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը 2025 թվականի ընթացքում աճուրդային կարգով օտարելու մասին» N 228-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝ որոշման 1-ին կետում 35-րդ տողից հետո լրացնել նոր՝ 36-41-րդ տողերով.

36	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան թիվ 4/501 հողամաս	19,8	07-002-0036-0346	բնակավայրերի	հասարակական կառուցապատման	140.0
37	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջանի 1-ին թաղամաս 16/1	191,6	07-002-0039-1764	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 015.0
38	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջանի 40/1 հողամաս	6,7	07-002-0039-1876	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	75.0
39	Համայնք Աբովյան, գ. Մայակովսկի	1998,5	07-043-0138-0081	գյուղատնտեսական	հնդավոր	2 000.0
40	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 2-րդ արդյունաբերական թաղամաս 14/13 հողամաս	30,0	07-002-0103-0252	արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	արդյունաբերական օբյեկտների	140.0
41	Համայնք Աբովյան, գ. Բալահովիտ հողամաս	574,8	07-018-0069-0056	գյուղատնտեսական	վարելահող	4 000.0

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Ա. Քոսակյանը նշեց, որ հանձնաժողովի նիստի ընթացքում առաջարկվել է որոշման ցանկում ընդգրկված հողամասերի մեկնարկային գներում կատարել նախնական արժեքների փոփոխություն՝
36-րդ կետով սահմանված հողամասի 140 000 (հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ մեկնարկային արժեքը դարձնել 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:
38-րդ կետով սահմանված հողամասի 75 000 (յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ մեկնարկային արժեքը դարձնել 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:
39-րդ կետով սահմանված հողամասի 2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամ մեկնարկային արժեքը դարձնել 3 000 000 (երեք միլիոն) ՀՀ դրամ:
40-րդ կետով սահմանված հողամասի 140 000 (հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ մեկնարկային արժեքը դարձնել 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Նախագիծը դրվեց քվեարկության առաջարկված տարբերակով:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 13-Ա)*

Նախքան օրակարգի վերջին հարցը ներկայացնելը, Վ.Բաբաջանյանը Ավագանու անդամներին հիշեցրեց, որ նրանք հանրային ծառայության մասին օրենսդրության շրջանակներում պարտավոր են մինչև սույն թվականի մայիսի 31-ը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնել 2024թ. եկամուտների, ծախսերի գույքի հայտարարագիր: Միաժամանակ Վ. Բաբաջանյանը տեղեկացրեց, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը նախատեսել է մինչև սույն թվականի մարտի 20-ն Աբովյանի համայնքապետարանի նիստերի դահլիճում կազմակերպել սեմինար-դասընթաց, որի նպատակն է հայտարարատու անձանց խորհրդատվական աջակցության ցուցաբերումը: Սեմինար-դասընթացի ժամկետների մասին Ավագանու անդամները կտեղեկացվեն լրացուցիչ:

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ)

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է***՝
1. Աբովյան համայքի ավագանու հերթական նիստի գումարման օր սահմանել 2025 թվականի մարտի 18-ը՝ ժամը 16:00:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 14 -Ա/

Ավագանու անդամներ

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ

ԹԱԹՈՒԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՍԵԴԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՌԱԶՄԻԿ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ԱՏՈՄ ԲԱԴԱԼՅԱՆ

ԱՄԱԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՄԵԼԻՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՎԱՉԱԳԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ՋԱՐԳԱՐՅԱՆ

ԱՆԻ ԹԵՆԵՔԵՋՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԱԻՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎՐԵԺ ՄԱՄՈՒԼՅԱՆ

ՆԱԻՐԱ ՄԵԼԻՔՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԵՂՐՅԱՆ

ԱՍՊՈՒՐԱԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ

ՊԵՏԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՊԱՎԵԼ ՑՈՒԳՈՒՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ՔՈՍԱԿՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ_____